

4), — ուղղափառութիւնն սկսաւ ի Գաղատիա
 Հայոց վանքին մէջէն, նոյն իսկ հաւանութեամբ
 Կարապետ Վ.ի: Գաղատացի կաթողիկեայ
 30 Յունիս 1717 գրած մէկ նամակէն կ'իմա-
 նանք, որ կաթողիկէութիւնն սկսած էր
 հոն հասարակութիւն կազմել 1707ին, եւ
 1717ին արդէն իբր 400 կաթողիկեայ Հայք
 կային, որոնց կ'այցելէին Մխիթար Աբրահամ
 աշակերտք, ինչպէս Հ. Յովսէփ Վ. Պրուսացի
 կը յիշուի 1716ին: Թէպէտ անկէ շատ յառաջ՝
 Մելգոն Վ. Դասպասեան, Ուրբանեան Դպրա-
 նոցի աշակերտն եւ Մէրտինի հայ կաթողիկեայ
 առաջին եպիսկոպոսն (1708ին ձեռնադրուած),
 1686ին Գաղատիա գացած եւ հոն եկեղեցա-
 կաններէն եւ աշխարհականներէն քանի մ'ան-
 ձինք շահած էր: Նաեւ Մերտինէն կաթողիկեայ
 մէկ քանի վարդապետ եւ տիրացու եկած
 էին եւ կաթողիկէութիւն կը սորվեցընէին.
 որոնցմէ զատ կը յիշուին նոյնպէս, Անտոնեան
 Միարանութեան շիմնագիրներէն (1707ին)
 Հ. Յակոբ Վ. Մուրատեան (1740ին Եպիսկո-
 պոս Բերիոյ եւ 1749 կաթողիկոս Տանն Կիլի-
 կիոյ) եւ Հ. Սահակ Վ. Տէր-Բարսեղեան (1740ին
 Եպիսկոպոս Քիլիսի): Ասոնք հետզհետէ իրենց
 վաստակեցան վանքին միաբաններէն Գաղատացի
 Պահատուր օղու Պետրոս Վ., Գաղատացի
 Տէրզի Շիրին օղու Մովսէս Վ., Ուսհայեցի
 Յովհաննէս Վ. եւ մանաւանդ Կեսարացի Վրթա-
 նէս Վ.ը: Այս Վրթանէս Վ. արդէն 1705—6ի
 միջոցին Պոլիս գնաց, եւ անկէ Էջմիածին՝ Կե-